



212. ԱՅԳԵՊԱՆԸ, ԻՐ ՈՐՈՒՆ ՈՒ ՕՁԸ

Մի այգեպան այգում նստած ճաշում էր և հետն էլ կաթ խմում։ Հանկարծ այգին անասուն է մտնում, և նա կաթով կիսատ բաժակը թողնում է ու գնում օտար անասունը դուրս անելու։

Երբ վերադառնում է, տեսնում է մի սիրուն օձ՝ գլուխը մոտակա կաշկառից երկարացրած, բաժակի կիսատ կաթը խմում է։ Այգեպանն ուզում է օձին սպանի, բայց մեկ էլ համբերում է, որ օձը կաթը խմի, հետո։ Երբ օձը կաթը խմում է, մի ոսկի է գցում բաժակն ու իր կաշկառը քաշվում։

Էս որ տեսնում է այգեպանը, շատ է դարմանում և ամեն օր կաթ է դնում օձի բնի առաջ, օձը խմում է ու մի ոսկի գցում բաժակը։ Այսպիսով օձն ու այգեպանը սիրով բարեկամություն են անում, և օձը, որպես տանու հեյվան, այգում ազատ ման է գալիս։

Այգեպանը շատ է հարստանում, բայց այդ գաղտնիքը չի հայտնում ոչ ոքի։

Մի օր էլ հիվանդանում է և անկողին ընկնում։ Նրա միննուճար տղան գալիս է, որ այգին չրի, տեսնում է մի խումբ օձեր այգում, արևի տակ տաքանում են։ Մարդ տեսնելուց բոլոր օձերը փախչում են, իսկ այգեպանի բարեկամ օձը մնում է իր համար ման գալու։ Տղան բահը քաշում է և օձի պոչը կտրում, իմանալով թե օձը կսատկի։

Աշխատանքից հոգնած պառկում է մի խնձորենու շվաքում ու քնում։ Օձը գալիս է և թունավորում իր բարեկամ այգեպանի որդուն։

Այգեպանը, երբ տեսնում է, որ որդին շեկավ, վեր է կենում ու մի կերպ գալիս այգին, տեսնում է տղան մեռած, իսկ իր բարեկամ

օձի բնի մոտ պոչի կտոր ընկած։ Իսկույն ճանաչում է, որ դա իր օձի պոչն է։ Արտասովելով տանում է թաղում որդուն։

Անցնում է մի քանի օր, այս մարդը որոշում է, որ դնա ու գտնի իր օձին։ Գնում է, դնում և մի օր էլ օտար անգամ մի կաշկառի մոտ գտնում է օձին։ Օձը տիրոջն է ճանաչում, տերը՝ օձին։ Այգեպանն ուրախացած ասում է.—Եղբայր օձ, ինչո՞ւ չես գալիս մեր բարեկամությունը շարունակենք։

—Ինչպե՞ս շարունակենք,—պատասխանում է օձը,—քանի որ ես իմ պոչն եմ հիշելու կսկծամ, իսկ դու էլ քո մեռած որդուն ես հիշելու ու վրշտանաս։

